«ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ ԿՈՂՄԻՑ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ՀԵՌԱՀԱՐ ՀԱՐԹԱԿՈՒՄ ՀԱՃԱԽՈՐԴ ԴԱՌՆԱԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐ

ԱՆՁՆԱԿԱՆ ԵՎ ԿԵՆՍԱՉԱՓԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ ՄՇԱԿԵԼՈՒ ԾԱՆՈՒՑՈՒՄ և ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ

Սույն անձնական տվյալներ մշակելու ծանուցումն ու համաձայնությունը (հետայսու՝ Ծանուցում-համաձայնություն) տրամադրվում են համաձայն «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի (հետայսու՝ Օրենք): Անձնական տվյալներ մշակող կամ Բանկ՝ «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ, հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան փողոց, թիվ 48:

Բանկի հեռահար հարթակում սույն Ծանուցում-համաձայնությանը ծանոթանալով և «V» թռչնանշանի լրացմամբ հավանություն տալով, Դուք հաստատում եք, որ տեղեկացված եք սույն Ծանուցման-համաձայնությանը և տալիս եք համաձայնությունն առ այն, որ Բանկը մշակի Ձեր անձնական և կենսաչափական տվյալները, այն է՝ անուն, ազգանուն, հայրանուն, անձը հաստատող փաստաթղթի տվյալներ, սոցիալական քարտի/հանրային ծառայության համարանիշի կամ դրանք չունենալու մասին տեղեկանքի տվյալներ, հասցե, հեռախոսահամար, կենսաչափական տվյալներ (դեմք, մատնահետք և այլն) և/կամ այլ տեղեկատվություն (այդ թվում՝ մահվան փաստի հաստատում և ամսաթիվ), որը հնարավորություն է տալիս ուղղակի կամ անուղղակի կերպով նույնականացնել հաճախորդի ինքնությունը համաձայն Օրենքի:

Ձեր անձնական և կենսաչափական տվյալները մշակվելու են՝ Բանկի հաճախորդ դառնալու, Ձեր և Բանկի միջև պայմանագրեր կնքելու, հետագայում Բանկի կողմից մատուցվող ծառայություններից օգտվելու, Բանկի կողմից անցկացվող ակցիաների/առաջարկների/այլ ծառայությունների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով:

Անձնական և կենսաչափական տվյալների մշակման համաձայնությունը տրվում է Օրենքի համաձայն Ձեր անձնական տվյալների հետ այնպիսի գործողություններ կատարելու համար (հավաքագրում, ամրագրում, մուտքագրում, համակարգում, պահպանում, օգտագործում և այլն), որոնք անհրաժեշտ են սույն Ծանուցման-համաձայնության մեջ նշված նպատակներին և օրենսդրությամբ Բանկի վրա դրված պարտականությունների կատարմանը հասնելու համար:

Ծանուցում-համաձայնությանը Բանկի հեռահար հարթակում «V» թռչնանշանի լրացմամբ հավանություն տալով՝ Դուք թույլատրում և լիազորում եք Բանկին հարցում կատարել Ձեր աշխատանքային վայր, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին և/կամ այլ անձանց պատկանող տեղեկատվական համակարգերին, ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ ՓԲԸ-ին, ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամ, ինչպես նաև վերջիններին տրամադրել Ձեր անձնական տվյալները և ստանալ Ձեր մասին տեղեկություններ, ինչպես նաև թույլատրում ենք առցանց նույնականացման ու գործարքների կատարման նպատակով Ձեր անձնական և կենսաչափական տվյալները փոխանցել «Sumsub» ընկերությունների խմբին առնչվող կազմակերպություններին, որոնք պարտավոր են իրականացնել համապատասխան տեխնիկական և կազմակերպչական միջոցառումներ՝ ապահովելու անձնական և կենսաչափական տվյալների անվտանգությունը՝ սույն Ծանուցում-համաձայնության մեջ նշված նպատակներին հասնելու համար:

Անձնական և կենսաչափական տվյալների մշակման համաձայնությունը համարվում է Ձեր կողմից տրված, և Բանկը ստանում է Ձեր անձնական տվյալները մշակելու իրավունք՝ Բանկում հաճախորդ գրանցվելու համար Բանկ դիմելու պահին, երբ Ձեր կողմից Բանկին տրամադրվել է Ձեր անձը հաստատող փաստաթուղթը, ինչպես նաև Ձեր և Բանկի միջև կնքված պայմանագրերի գործողության ընթացքում այդ պայմանագրերով սահմանված գործողությունների կատարման նպատակով, ինչպես նաև Բանկային գաղտնիքի մասին ՀՀ օրենքի համաձայն Բանկի հետ համագործակցող/Բանկին ծառայություններ մատուցող/Բանկի համար աշխատանքներ կատարող կազմակերպություններին տրամադրելու նպատակով՝ պայմանով, որ դա անհրաժեշտ է տվյալ ծառայությունները մատուցելու կամ աշխատանքները կատարելու համար և/կամ բոլոր այն դեպքերում, երբ այդ տվյալների մշակման պահանջն ուղղակիորեն սահմանված է օրենքով:

Սույն Ծանուցում-համաձայնությունը համարվում է տրված նաև վերոնշյալ տվյալների աղբյուր հանդիսացող հիշատակված մարմինները վերանվանվելու, վերակազմակերպվելու կամ այլ մարմիններով/աղբյուրներով փոխարինվելու դեպքում, եթե սույն Ծանուցման-համաձայնության հիման վրա ստացման ենթակա կամ տրամադրվող տեղեկատվության ծավալը մնում է նույնը:

Ձեր կողմից Ձեր անձնական և կենսաչափական տվյալների մշակման մասին համաձայնության գրավոր հետ կանչման, կամ անձնական տվյալների ուղղում կամ ոչնչացում (եթե անձնական տվյալներն ամբողջական կամ ճշգրիտ չեն կամ հնացած են կամ ձեռք են բերվել անօրինական ճանապարհով կամ

անհրաժեշտ չեն մշակելու նպատակներին հասնելու համար) կատարելու պահանջ ներկայացնելու դեպքում: Բանկը պարտավորվում է դադարեցնել Ձեր անձնական տվյալների մշակման գործողությունները կամ ուղղել կամ ոչնչացնել Ձեր անձնական տվյալները տասն աշխատանքային օրվա ընթացքում, եթե Ձեր և Բանկի միջև առկա չեն չկատարված պարտավորություններ և բացակայում են գործող պայմանագրային հարաբերություններ, այլապես Ձեր և Բանկի միջև պայմանագրային հարաբերությունները ենթակա են դադարեցման՝ դրանից բխող բոլոր բացասական հետևանքներով: Ձեր անձնական և կենսաչափական տվյալների մշակման մասին համաձայնության հետ կանչման կամ Ձեր անձնական տվյալների ոչնչացում պահանջելու դեպքում Ձեր անձնական տվյալները դադարում են մշակվել Բանկի կողմից, սակայն դրանք պահպանվում են տեղեկատվական արխիվում և կարող են օգտագործվել միայն օրենսդրությամբ նախատեսված դեպքերում: Համաձայնության հետ կանչը հետադարձ ուժ չունի:

Անձնական և կենսաչափական տվյալների մշակման համաձայնությունը տրվում է Բանկում հաճախորդ գրանցվելու համար՝ դիմելու պահին, և շարունակում է գործել Ձեր և Բանկի միջև կնքված պայմանագրերի գործողության ողջ ժամանակահատվածի համար, իսկ օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ այդ դեպքերի համար սահմանված ժամանակահատվածի համար:

«Օտարերկրյա հաշիվների հարկման մասին» ԱՄՆ օրենքի (Foreign Account Tax Compliance Act, այսուհետ՝ FATCA) իմաստով «ԱՄՆ անձ» հանդիսանալու պարագայում FATCA օրենքով նախատեսված դեպքերում և կարգով Բանկն իրավունք ունի Ձեր և Ձեր հաշիվների ու Բանկին հայտնի եկամուտների մասին տեղեկատվություն տրամադրի ԱՄՆ Ներքին եկամուտների ծառայությանը (Internal Revenue Service, IRS)՝ վերոհիշյալ օրենքի հիման վրա սահմանված Հաշվետվական ձևերով:

Ի կատարումն «Օտարերկրյա հաշիվների հարկման մասին» ԱՄՆ օրենքի պահանջների՝ Բանկն իրավունք ունի միակողմանիորեն փակել Ձեր հաշիվը, եթե Ձեր տվյալներում Բանկի կողմից հայտնաբերվել են ԱՄՆ հարկատուի հատկանիշներ (այն է՝ ԱՄՆ քաղաքացիություն, ԱՄՆ ռեզիդենտությունն, ԱՄՆ-ում մշտական գտնվելու թույլտվություն, ԱՄՆ-ում ծննդավայրի, ԱՄՆ-ում բնակության և/կամ փոստային հասցեի, ԱՄՆ տարածքում կոնտակտային հեռախոսահամար և/կամ ֆաքսի համարի, ԱՄՆ-ում գրանցման հասցե ունեցող անձին տրամադրված լիազորագրի կամ ստորագրության իրավունքի և ԱՄՆ-ում գտնվող հաշվին մեկ անգամից ավել փոխանցման իրականացման համար տրված Պարբերական վճարումների հանձնարարականի առկայություն) և Դուք հրաժարվում եք Բանկին տրամադրել Ձեր վերաբերյալ տեղեկատվությունը ԱՄՆ Հարկային ծառայությանը/ ԱՄՆ հարկային գործակալի գործառույթ իրականացնող անձին FATCA-ի պահանջների համաձայն:

Դուք պարտավոր եք FATCA-ի իմաստով ապագայում «ԱՄՆ անձի» կարգավիճակ ձեռք բերելիս՝ այդ մասին գրավոր ծանուցել (տեղեկացնել) Բանկին առավելագույնը 30-օրյա ժամկետում:

ԱՄՆ քաղաքացիություն և/կամ ԱՄՆ ռեզիդենտությունն, ԱՄՆ-ում մշտական գտնվելու թույլտվություն ունեցող հաճախորդները պարտավոր են տրամադրել Բանկին իրենց հարկային նույնականացման համարանիշը (TIN/Social security number) և տվյալ հաճախորդը կգրանցվի Բանկում որպես «ԱՄՆ անձ»:

«ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ ՀԵՌԱՀԱՐ ՀԱՐԹԱԿՈՒՄ ՀԱՃԱԽՈՐԴ ԴԱՌՆԱԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Ձեր կողմից տրամադրված տվյալների հիման վրա Բանկը կկատարի տվյալների հավաքագրում և կգրանցի Ձեզ Բանկի համակարգում որպես հաճախորդ, կբացի բանկային հաշիվ, կակտիվացնի Մոբայլ/Ինտերնետ Բանկ համակարգերը, որի վերաբերյալ տեղեկատվությունը կտրամադրվի Ձեր կողմից տրամադրված էլեկտրոնային փոստին ուղարկված նամակի միջոցով:

ՆԱԽՔԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ ՀԱՃԱԽՈՐԴԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ (ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՇԻՎ)

2. **Ծառայության բնույթը**. Բանկային հաշիվը բացվում է ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձանց կողմից: Հաշվով կարող են կատարվել անսահմանափակ մուտքագրումներ և ելքագրումներ, փոխանցումներ ՀՀ և արտերկիր, արտարժույթի անկանխիկ փոխարկումներ, ավանդի բացման, վարկի տրամադրման հետ կապված գործարքներ, հաշվով կատարվող այլ գործառնություններ:
3. **Ծառայության էական պայմաններն են՝**

- ✓ արժույթ՝ ՀՀ դրամ
- ✓ բանկային հաշվի բացման վճար՝ անվճար,
- ✓ բանկային հաշվի սպասարկման տարեկան վճար՝ անվճար,
- ✓ տարեկան պարզ տոկոսադրույք՝ 0%,

- ✓ տարեկան տոկոսային եկամտաբերություն՝ 0%,
- ✓ պայմանագրի գործողության ժամկետ՝ անժամկետ,
- ✓ հաշվի նվազագույն մնացորդ՝ չի կրառվում
- ✓ գումարի կանխիկացման վճար՝ համաձայն Սակագների
- ✓ **պարտադիր այլ վճարների առաջացման դեպքեր և ծավալներ՝**
- ✓ **տույժեր և/կամ տուգանքներ՝**

4. **Քաղվածքներ և պարտադիր ներկայացման տեղեկատվություն.** Հաճախորդն իրավունք ունի հաղորդակցվել Բանկի հետ իր նախընտրած եղանակով՝ էլեկտրոնային եղանակով կամ փոստային կամ կապի այլ միջոցով (եթե այդպիսին նախատեսված է Բանկի կողմից): Էլեկտրոնային եղանակով տեղեկատվության ստացումն ամենահարմարավետն է: Այն հասանելի է 24/7 ռեժիմով, զերծ է թղթային տեղեկատվության կորստի ռիսկերից և ապահովում է գաղտնիություն:
5. Բանկային հաշվի քաղվածքը Բանկը համաձայն ՀՀ օրենսդրության պահանջների տրամադրում է Հաճախորդին էլեկտրոնային եղանակով Հաճախորդն իր գրավոր, այդ թվում՝ էլեկտրոնային եղանակով ներկայացված դիմումի հիման վրա կարող է հրաժարվել քաղվածքները էլեկտրոնային կապի միջոցով ստանալու իրավունքից՝ դրանք փոստային կամ կապի այլ միջոցներով (եթե այդպիսին նախատեսված է Բանկի կողմից) ստանալու պայմանով: Ընդ որում, Հաճախորդն իրավունք ունի իր գրավոր դիմումով միակողմանի փոփոխելու հաղորդակցման միջոցը ոչ ավելի, քան տարին մեկ անգամ, և այդ փոփոխությունը կիրառվում է գրավոր դիմումը Բանկի կողմից ստանալուց 30 օր հետո իրականացվող հաղորդակցման նկատմամբ: Յուրաքանչյուր ամիս պարտադիր տրամադրվող քաղվածքները Բանկի կողմից տրամադրվում են անվճար:

ՆԱԽՔԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ ՀԱՃԱԽՈՐԴԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ (ՄՈԲԱՅԼ/ԻՆՏԵՐՆԵՏ ԲԱՆԿ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ)

6. **Ծառայության բնույթը**. էլեկտրոնային բանկային սպասարկման համակարգի (Մոբայլ/Ինտերնետ Բանկ համակարգեր) միջոցով իրականացվում է Համակարգով իրեն հասանելի բոլոր հաշվարկային գործառնությունները և ստանում հաշվի վերաբերյալ ամբողջական տեղեկատվությունը:
7. **Ծառայության էական պայմաններն են՝**

- ✓ դիտման հնարավորություն՝ անվճար,
- ✓ գործառնությունների կատարման հնարավորություն՝ անվճար,
- ✓ պայմանագրի գործողության ժամկետ՝ անժամկետ,

ԲԱՆԿԻ ՀԵՌԱՀԱՐ ՀԱՐԹԱԿՈՒՄ «V» ԹՌՉՆԱՆՇԱՆԻ ԼՐԱՑՄԱՄԲ ԴՈՒՔ ՀԱՎԱՍՏՈՒՄ ԵՔ, ՈՐ ԾԱՆՈԹԱՑԵԼ ԵՎ ՀԱՄԱՁԱՅՆ ԵՔ.

8. Բանկի կողմից «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի բանկային և առարկայազուրկ մետաղական հաշիվների բացման և սպասարկման հիմնական (ընդհանուր) կանոններին (այսուհետ Կանոններ), որոնք հրապարակային են և զետեղված են Բանկի պաշտոնական կայքում այստեղ,
9. Բանկի կողմից «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ կողմից ֆիզիկական անձանց մատուցվող ծառայությունների սպասարկման սակագներին (այսուհետ Սակագներ), որոնք հրապարակային են և զետեղված են Բանկի պաշտոնական կայքում այստեղ,
10. Բանկային հաշվի Տեղեկատվական ամփոփագրին, որը հրապարակային է և զետեղված է Բանկի պաշտոնական կայքում այստեղ,
11. էլեկտրոնային բանկային սպասարկման համակարգով (Մոբայլ/Ինտերնետ Բանկ համակարգեր) բանկային հաշվի էլեկտրոնային սպասարկման առանձնահատկությունները, որոնք հրապարակային են և զետեղված են Բանկի պաշտոնական կայքում այստեղ,
12. «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի ավանդների հատուցման երաշխավորման պայմաններին և կարգին,
13. Ձեր կողմից տրամադրված տեղեկությունները ճիշտ են և արժանահավատ:
14. Ձեր կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա Բանկը կատարելու է հարցում Բանկի տեղեկատվական բազայում պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին և/կամ այլ անձանց պատկանող տեղեկատվական համակարգերին,
15. Բանկի կողմից ՀՀ օրենսդրության համաձայն նախքան պայմանագրի կնքումը պարտադիր ներկայացվող տեղեկատվությանը,

16. Բանկը, որևէ հիմքով Ձեր կողմից ընտրված ծանուցման եղանակով ծանուցումն իրականացնելու անհնարինության դեպքում, կարող է որպես բարի կամքի դրսևորում իր հայեցողությամբ որպես Ձեզ ծանուցման լիարժեք այլընտրանքային եղանակ կիրառել ցանկացած հասցե/կապի միջոց/հեռախոսահամար, որը Դուք նշել եք հաշվի բացման էլեկտրոնային հայտում կամ այլ գրավոր եղանակով տրամադրել եք Բանկին:
17. Կրիպտոարժույթով կամ կրիպտոարժույթի հետ կապված գործարքները Բանկի հաշիվներով չեն թույլատրվում:
18. Բանկն իրավունք ունի մերժել էլեկտրոնային հայտի մշակման գործընթացը էլեկտրոնային հայտի ներկայացման պահին.
    1) Բանկում գործող հաճախորդ լինելու դեպքում,
    2) Բանկում գործող բանկային հաշվի առկայության դեպքում,
    3) 18 տարեկանից ցածր տարիքի դեպքում,
    4) ոչ արժանահավատ տեղեկատվության տրամադրման դեպքում,
    5) կենսաչափական նույնականացման ստուգում չանցելու՝ դեմքի լուսանկարի և անձը հաստատող փաստաթղթի լուսանկարի չհամընկնելու դեպքում,
    6) ծառայության այլ պայմաններին չբավարարելու դեպքում:

Ծ Ա Ն Ու Ց Ու Մ
ԱՎԱՆԴՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԵՎ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

1. **ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ**. Խնդրում ենք մինչև Պայմանագիրը ստորագրելը ծանոթանալ սույն փաստաթղթի դրույթներին: Ձեր Ավանդի հատուցման երաշխավորողն է Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամը (այսուհետ՝ Հիմնադրամ)
   Հիմնադրամի գտնվելու վայրը՝ ք. Երևան, Խորենացի 15, "Էլիտ Պլազա" բիզնես կենտրոն, Հեռախոսը՝ +374 10 58 35 14, Ինտերնետային կայքը՝ http://www.adgf.am/
   «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ հեռախոս՝ +37410592020,+37460372500
2. Հատուցման դեպքը.
   Ձեր Երաշխավորված ավանդը ենթակա է հատուցման հետևյալ դեպքերում՝
   - Եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Բանկը ճանաչվում է անվճարունակ և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) խորհրդի որոշմամբ հաստատվում է Բանկի կողմից օրենքով և պայմանագրերով սահմանված ժամկետներում ավանդները վերադարձնելն ի վիճակի չլինելու փաստը կամ
   - Եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Բանկը սնանկ է ճանաչվում (այսուհետ՝ անվճարունակ Բանկ):
3. Երաշխավորված ավանդի առավելագույն չափը և հաշվարկման կարգը.
   Երաշխավորված ավանդների հաշվարկման կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի օգոստոսի 26-ի թիվ 261-Ն որոշմամբ:
   Ուշադրություն՝ Ձեր՝ նույն Բանկում ունեցած բոլոր դրամային ավանդները համարվում են մեկ դրամային ավանդ, բացառությամբ չերաշխավորված ավանդների, և Ձեր՝ նույն Բանկում ունեցած բոլոր արտարժութային ավանդները համարվում են մեկ արտարժութային ավանդ, բացառությամբ չերաշխավորված ավանդների:
   Այն դեպքում, երբ Բանկի նկատմամբ Ձեր բանկային ավանդը ձևավորվել է Բանկի՝ մեկ կամ մի քանի բանկերի միացման արդյունքում, ապա յուրաքանչյուր միացող Բանկում Ձեր ունեցած բանկային ավանդը դիտվում է որպես առանձին բանկային ավանդ՝ Օրենքով սահմանված կարգով:
   Ավանդների երաշխավորվող սահմանաչափերը հետևյալն են՝

Ավանդի արժութային կառուցվածքը	Եթե նույն Բանկում ունեք միայն դրամային ավանդ	Եթե նույն Բանկում ունեք միայն արտարժութային ավանդ	Եթե նույն Բանկում ունեք և ՀՀ դրամով և արտարժույթով ավանդ	
			Եթե դրամային ավանդը 7 միլիոն դրամից ավել է	Եթե դրամային ավանդը 7 միլիոն դրամից պակաս է
Ավանդի երաշխավորման	16 միլիոն ՀՀ դրամ	7 միլիոն ՀՀ դրամ	16 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է	7 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է

առավելագույն չափը			միայն դրամային ավանդը)	դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժութային ավանդը՝ 7 միլիոն դրամի և հատուցման ենթակա դրամային ավանդի տարբերության չափով)

4. Չերաշխավորված բանկային ավանդ.

Ձեր բանկային ավանդը երաշխավորված չէ, եթե՝

ա/ Դուք հանդիսանում եք տվյալ Բանկի ղեկավար և (կամ) վերջինիս ընտանիքի անդամ,

բ/ Դուք հանդիսանում եք տվյալ Բանկում նշանակալից մասնակցություն ունեցող անձ և (կամ) վերջինիս ընտանիքի անդամ,

գ/ Դուք, որպես ավանդի սեփականատեր (համասեփականատեր), հրաժարվել եք ավանդի՝ Ձեր մասի նկատմամբ սեփականության իրավունքից,

դ/ Ձեր ավանդն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով ճանաչվել է հանցավոր ճանապարհով ձեռք բերված դրամական միջոց, քանի դեռ Դուք հակառակը չեք ապացուցել,

ե/ Ձեր ավանդը տվյալ Բանկում ներդրվել է բանկային ավանդի ներդրման պահին տվյալ Բանկի կողմից հրապարակային պայմանագիր կնքելու առաջարկով նախատեսված նմանատիպ բանկային ավանդների տոկոսադրույքն առնվազն 1,5 անգամ գերազանցող տոկոսադրույքով,

զ/ Ձեր ավանդը ներդրված է Բանկի՝ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ստեղծված մասնաճյուղերում:

5. Երաշխավորված ավանդների հատուցման կարգը և ժամկետները.

Հատուցման դեպքի օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում Հիմնադրամը հայտարարություն է հրապարակում հատուցման դեպքի մասին: Հատուցման դեպքի օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրվանից սկսած Հիմնադրամը, անվճարունակ Բանկի կամ այլ բանկի միջոցով, սկսում է իրականացնել Ձեր ավանդների հատուցման գործընթացը: Դուք կարող եք գրավոր կամ էլեկտրոնային եղանակով պահանջ ներկայացնել ոչ ուշ, քան հատուցման դեպքի օրվան հաջորդող երեք տարվա ընթացքում: Նշված ժամկետում Ձեր կողմից գրավոր պահանջ չներկայացնելու դեպքում Հիմնադրամի կողմից Ձեր երաշխավորված ավանդի հատուցում չի իրականացվի: Հիմնադրամը պարտավոր է իրականացնել ավանդատուների պահանջներով հատուցումները՝ գրավոր կամ էլեկտրոնային եղանակով պահանջը ներկայացնելու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ Օրենքով նախատեսված դեպքերի:

6. Ձեր բանկային ավանդը ներդրման պահին հանդիսանում է Օրենքով սահմանված չափով և կարգով՝
   - երաշխավորված ավանդ [illegible] /այն համատեղ ավանդների դեպքում, որոնց համատեղ ավանդատուներից մեկի կամ մի քանիսի բանկային ավանդները երաշխավորված ավանդ չեն համարվում, նշել ավանդի ընդհանուր գումարի մեջ երաշխավորված մասը՝ տոկոսային արտահայտությամբ/
   - չերաշխավորված ավանդ [illegible]
   - Եթե Դուք անվճարունակ Բանկում ունեք առանձին բանկային ավանդ և միևնույն ժամանակ նույն Բանկում ներդրված համատեղ բանկային ավանդի սեփականատեր եք, ապա երաշխավորվում է Ձեր առանձին բանկային ավանդի և համատեղ բանկային ավանդում Ձեր մասնաբաժնի հանրագումարը՝ Օրենքով սահմանված կարգով և չափով:
   - Եթե դուք անվճարունակ Բանկի նկատմամբ ունեք խնդրահարույց պարտավորություն, ապա հատուցման ենթակա գումարը կհաշվարկվի Ձեր բանկային ավանդի և խնդրահարույց պարտավորության դրական տարբերության հիման վրա: Խնդրահարույց պարտավորություն է համարվում Ձեր այն պարտավորությունը, որի հիմնական գումարի (կամ դրա մի մասի) մարումը կամ տոկոսների վճարումն ուշացրել եք պայմանագրում նշված ժամկետից 90 օրից ավելի:Երկու կամ ավելի ավանդատուների համատեղ բանկային ավանդը համարվում է յուրաքանչյուր անձի առանձին բանկային ավանդ, ավանդատուի՝ պայմանագրով սահմանված մասնաբաժնի չափով: Եթե պայմանագրով սահմանված չեն համատեղ բանկային ավանդի ավանդատուների մասնաբաժինները, ապա համատեղ բանկային ավանդն ավանդատուների միջև բաժանվում է հավասարաչափ:

- Բանկային ավանդի հատուցումը կատարվում է միայն հայկական դրամով: Արտարժութային բանկային ավանդի դրամական համարժեքությունը որոշվում է հատուցման դեպքը տեղի ունենալու օրվա դրությամբ Կենտրոնական բանկի հրապարակած՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով:
- Ձեր բանկային ավանդը չի հատուցվում եթե հատուցման դեպքը տեղի ունենալու օրվա դրությամբ այդ ավանդը պակաս է 1000 հայկական դրամից:
- ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ: Ձեր ավանդի հատուցումն առավել սահուն իրականացնելու նպատակով՝ առաջարկում ենք ավանդի ներդրման ժամանակ Ձեր կողմից Բանկին տրամադրված տվյալների (անձը հաստատող փաստաթղթի տվյալներ, սոցիալական ապահովության քարտի տվյալներ, հասցե, հեռախոսահամար և այլն) ցանկացած փոփոխության դեպքում այդ մասին անմիջապես տեղեկացնել Բանկին: